

Բ Ա Ն Ա Ս Է Ր

Ա Մ Ս Ա Թ Ե Ր Թ

Գ Գ Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ե Ց Ա Կ Ա Ն

Զ ՏԱՐԻ 1904	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռրլ. = 3 դոլար :	ՅԼՍ. -ՕԳՈՍՏ. Թիի 7-8
----------------	---	-------------------------

ԶԵՌԱԳՐԱՑ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԷՏԻՐ

Հայ ձեռագիրներու յիշատակարանները մեր ազգային պատմութեան համար վաւերական աղբիւրներ են, որոնք գրուած են այսինչ կամ այնինչ անձի կողմէ, որը օրին, օրուան դէպքերու ազդեցութեան տակ, երբեմն զարդարուն եւ երբեմն պարզ՝ անպաճոյճ ոճով ։ Պատմաբանին ու ժամանակագրին, աշխարհագէտին ու տեղագրին, քերականին ու ազգագրագէտին հաւասարապէս քաղելու նիւթ կայ անոնց մէջ ։ Եւ ճիշտ ասոր համար է, որ շատ տարիներէ ի վեր զանազան թերթերու եւ զրքերու միջոցով կը հրատարակուին այլ եւ այլ ձեռագիրներու յիշատակարաններ ։

Հայ ձեռագրաց յիշատակարաններու հրատարակութեան մեծապէս օգնած են Ղևոնդ վ. Փիրղալէմեան, Գար. Կպ. Սրուանձաեանց, եւ զանազան մասենազարաններու մէջ գտնուած հայերէն ձեռագիրներու ցուցակը կազմողներ ։

Հայ կամ օտարագրի բանասէրը բնական է թէ միջոցներ չի կրնար ունենալ ձեռք բերելու բոլոր հրատարակութիւններն որոնց մէջ լոյս տեսած են յիշատակարանները ։ Ուրեմն ի՞նչ պէտք է ընել ։ — Պէտք է ամենը մէկտեղ ժողովել եւ հրատարակել ։ Ահա այս հրատարակութեան ձեռնարկած է Վենետիկի Մխրթարեաններէն հ. Մկրտիչ վ. Պոտուրեան, որ ծանօթ է «Մլքէի աւետարանի զարդանկարները» հրատարակութեամբ ։

Հ. Պոտուրեան ժամանակագրական կարգով մի քանի հատորներու մէջ ամփոփած է թէ՛ սպագիր եւ թէ՛ անտիպ բոլոր ծանօթ յիշատակարանները ։ Գաղափար մը կազմելու համար բաւական է ըսել, թէ Ա հատորը պիտի կազմէ մինչեւ 1399 թ. գրուած յիշատակարանները, գրաւե-

լով 900 երես . Բ հատորը՝ 1300էն մինչեւ 1499 թ. պիտի հասնի , մի եւ նոյն ծաւալով . Գ. հատորը՝ 1500էն մինչեւ 1699 թ. , միշտ նոյն ծաւալով : Այսպէս պիտի շարունակուի մինչեւ ժԹ դար :

Գործին ուրիշ շահեկան կողմերը պիտի ըլլան՝ 1) Հրատարակչին կողմէ տեղ տեղ դրուած պատմական եւ աշխարհագրական ծանօթութիւններ , եւ 2) ընդարձակ ներածութիւն մը , որուն մէջ պիտի խօսուի թուականի վրայ , այսինքն թէ քանի՛ տեսակ թուական գործածած են մեր նախնիք , կ'ըբ սկսեր են Աշխարհի ստեղծման , Ադամայ , Հոռոմոց , Հայոց , Սարկաւազի եւն . թուականները . նոյնպէս պիտի խօսուի նաեւ « Գիր »ի , « Նիւթ »ի , « Կազմ »ի , եւ ձեռագրաց տեսակներու վրայ զ . օ . թէ ի՛նչ է « Մաշտոց » , « Ոսկեփորիկ » , « Տօնական » , եւ թէ կ'ըբ խմբագրուած եւ յաւելուածներ կրած են անոնք : Ամենէն վերջը պիտի գրուի բոլոր յատուկ անուններու կանոնաւոր մէկ ցանկը . եւ՝ որպէս զի շփոթութիւն տեղի չունենայ՝ անուններու առջեւ պիտի նշանակուին թուականներն ալ . օրինակի համար՝ Յովնաննէս , որ ամենէն շատ գործածական անուններէն մէկն է եւ ձեռագիրներու մէջ 1000 տեսակէ աւելի Յովհաննէս կայ , այսպէս նշանակուած պիտի ըլլայ .

թ. 869	Յովհաննէս բժիշկի ,	Թարգմանիչ ս . Դիոնեսիոսի պատմութեան
1002	—	Կազմող Աւետարանի , վախճանեալ
1099	—	եղբ . Ահարոն գրչի , նահատակի յանօրինաց
1181	—	Հոռոմոսի վանքէն , գրիչ Աւետարանի
1187	—	— — — Բարսղի Վեցօրէից (տես յամի 1195)
1189	—	Նուիրատու ս . Նշանի
1195	—	եպ . Հաղբատայ (տես յամի 1187) եւն . եւն .

որմէ կը հետեւի , թէ 1187-ի Յովհաննէսը նոյն է 1195-ի Յովհաննէսին հետ : Այսպէս նաեւ զ . օ .

Սիւս . — 1211 Սոոյ մէջ գրէ Գրիգոր զԱւետ . 1225 Սիւսը պաշարի . 1232 Սոոյ մէջ վախճանի Կիրակոս եպ . եւն . եւն .

Այս տեսակ գործ մը կարելի չէ մէկ հոգիի աշխատութեամբ հրատարակ հանել . պէտք է որ մենք ալ մեր ձեռքէն եկածն ընենք եւ օգնենք հ . Գոտուրեանին . զրկիլով մեզ ծանօթ ձեռագիրներու յիշատակարանները , եթէ կուզենք հայ գրականութեան աղքատիկ գանձարանին մէջ լումայ մը ձգել :

Ասիկա պա՛րօք համարելու ենք մեզ :

Կ . Յ . Բ .

